



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13 ապրիլի 2026 թվական

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախազախությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՍԴՅ/0338/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2026 թվականի մարտի 26-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2025 թվականի դեկտեմբերի 17-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Ա.Ա.Հ.-ի վերաբերյալ՝ ՀՀ

Ա.Հ.-ն մարտական դիրքում, դիտորդի պարտականությունները իրականացնելու ընթացքում, քնելու համար հնչեցված հայհոյանքներից «զերծ մնալու», սեփական պարկերացումների համաձայն՝ անձնական հեղինակությունը պաշտպանելու, Ա.Խ.-ի կողմից իր քնելու հանգամանքը պարբերաբար շահարկելու, այդ թվում քնելու մեջ «մեղադրելու» համար վրեժխնդիր լինելու նպատակով, գրնվելով լարված հոգեվիճակում, 27.08.2023թ-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, իրեն ամրակցված ԱԿ-74 տեսակի ***** գործարանային համարի ինքնաձիգից կրակահերթ արձակելով՝ սպորինաբար կյանքից զրկել է ***** Ա.Հ.Խ.-ին, իսկ վերջինիս՝ վերը նկարագրված գործողությունների արդյունքում Ա.Ա.Հ.-ի մուր սրեղծվել է լարված հոգեվիճակ՝ ծառայակիցների կողմից արհամարհական և մերժողական վերաբերմունքի հնարավոր դրսևորման հանգամանքով պայմանավորված՝ հայրնվել է անելանելի վիճակում, որից այլ կառուցողական ելք չգրնելով՝ նույն պահին նույն ինքնաձիգով կրակոց է արձակել կզակի շրջանում և ինքնասպան եղել: (...)»²:

5. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի մարտի 3-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Թիվ ՄԴՅ/0338/01/25 քրեական վարույթով ներգրավված են թվով տասներկու մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնցից թվով յոթի՝ մեղադրյալի օրինական ներկայացուցիչ Ա.Հ.-ի, վկաներ՝ Ս.Ա.-ի, Պ.Ն.-ի, Ֆ.Ա.-ի, Ժ.Ն.-ի, Գ.Բ.-ի և Վ.Ա.-ի բնակության վայրն է ***** *****, իսկ թվով հինգի՝ մեղադրյալի օրինական ներկայացուցիչ՝ Հ.Խ.-ի բնակության վայրն է ***** *****, պաշտպան Վաղարշ Աղաբեկյանի, վկա՝ Տ.Հ.-ի բնակության վայրն է ***** *****, վկա Վ.Ա.-ի բնակության վայրն է ***** *****, իսկ վկա Հ.Գ.-ինը՝ ***** *****:

Դատարանն արձանագրում է, որ սուկա [են] ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պայմանները, այն է՝ տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ սուկա է մահացած մեղադրյալների օրինական ներկայացուցիչների համաձայնությունը, և որ վարույթի

² Տե՛ս քրեական վարույթ, հատոր 4, թերթեր 29-30:

մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է մեկ այլ՝
ՀՀ ***** օրենսդրության 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հաջորդ պայմանին՝

Գալարանն անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի
261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հաջորդ պայմանին՝
արդարադատության շահին, արձանագրում է հետևյալը.

Ինչպես նշվեց՝ սույն քրեական վարույթով ներգրավված են թվով տասներկու
մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնցից թվով յոթի բնակության վայրն է
***** օրենսդրության 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հաջորդ պայմանին՝

Այս համարեքստում դատարանն արձանագրում է, որ սույն քրեական
վարույթով ներգրավված մասնավոր մասնակիցները և վկաները ***** կամ
հարակից մարզում չեն բնակվում:

Նշված փաստակազմի առկայության պայմաններում դատարանն
արձանագրում է, որ սույն վարույթի փորձարկման ընդդատությունը փոխելը բխում է
արդար դատաբանության իրավունքի իրացումն ապահովելու, ինչպես նաև քրեական
դատավարությունն արդյունավետ կազմակերպելու, տեխնիկական բնույթի
խնդիրներն ու ողջամիտ ժամկետում գործի քննության և դրանից ածանցվող այլ
իրավունքների խախտումները բացառելու անհրաժեշտությունից, ավելին՝ նաև
պետության ֆինանսական ռեսուրսները խնայելու նկատառումներից:

Ամփոփելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ վարույթի մասնավոր
մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում են ***** ,
ինչպես նաև մահացած մեղադրյալների օրինական ներկայացուցիչները
համաձայնել են, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցվի ՀՀ Գեղարքունիքի
մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարան, և որ այն բխում է
արդարադատության շահից, ուստի Գալարանը գտնում է, որ սույն քրեական
վարույթի փորձարկման ընդդատությունն անհրաժեշտ է փոխել և այն ուղարկել ՀՀ
Գեղարքունիքի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարան:
(...)»³:

³ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 55-57:

տասներկու մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնցից մեծամասնության՝ թվով յոթի բնակության վայրը ***** Է, ապա նշված իրավիճակը ձևավորվել է այն ժամանակ, երբ նախնական դատախոսների ընթացքում ապացույցների ծավալը որոշելու ժամանակ փաստաբան Վաղարշ Աղաբեկյանը միջնորդել է ապացույցների ծավալում ներառել չորս վկաներ, որոնց բնակության վայրը հանդիսանում է *****:

Դատարանի գնահատմամբ նման պայմաններում վարույթի փարածքային ընդդատությունը փոխելը չի բխում նաև արդարադատության շահից, հաշվի առնելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության ձևավորումը սույն դեպքում պայմանավորված է ապացույցների ծավալը որոշելու փուլում քրեական վարույթի մեղադրական եզրակացությանը կից տեղեկանքում չներառված այլ վկաների ներգրավմամբ: Հետևաբար Դատարանը գտնում է, որ Սյունիքի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանը, դրսևորելով իրար ձևական մոտեցում, վարույթի փարածքային ընդդատությունը փոխել և վարույթը Գեղարքունիքի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարան է փոխանցել բացառիկ հիմքերի բացակայության պայմաններում:

Դատարանի նման եզրահանգումը հիմնավորվում է այն փաստով, որ գործը նոր արացած այլ Դատարանը քրեական գործի նախնական կամ հիմնական դատախոսների փուլում կարող է ապացույցների ծավալի մեջ ներառել կամ չներառել վկաների՝ համապատասխան հիմնավորումներով, ինչի արդյունքում հնարավոր է այլ դատարանի դատական փարածքում բնակվող վկաների քանակը ավելանալ կամ պակասել, և դրա արդյունքում կարող է առաջանալ քրեական վարույթի փարածքային ընդդատությունը փոխելու դատական շրջապարույր:

Մասնավորապես սույն դեպքում, վերացարկվելով Դատարանի սույն որոշմամբ արձանագրված դիրքորոշումից, սույն քրեական վարույթը սրանձնելուց հետո նախնական դատախոսների ընթացքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հարցի քննարկման ժամանակ Դատարանը արձանագրելու է, որ վարույթը փարածքային առումով ընդդատյա չէ Գեղարքունիքի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանին,

Նշվածը հաշվի առնելով Գաբարանը գրնում է, որ քրեական վարույթի այլ փուլում, այդ թվում՝ նախնական դատալսումների ընթացքում ապացույցների ծավալը սահմանելու ընթացքում վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության ձևավորմամբ վարույթի փարածքային ընդդատությունը փոխելը չի բխում արդարատարության շահից, այն սրեղծում է ընդամենը արհեստական հիմքեր փարածքային ընդդատության փոփոխման հետ կապված, ինչը իրավաչափ չի կարող համարվել:

Հերևարար Գաբարանը գրնում է, որ ապացույցների ծավալը սահմանելուց հետո առաջացած հանգամանքների հաշվառմամբ ***** ***** չէր կարող գնահատվել որպես վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության բնակության վայր, իսկ թիվ ՄԴ3/0338/01/25 քրեական վարույթը չէր կարող ըստ փարածքային ընդդատության փոխանցվել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, ուստի Գաբարանն իր անհամաձայնությունն է հայտնում թիվ ՄԴ3/0338/01/25 քրեական վարույթի փարածքային ընդդատության հետ կապված և գրնում է, որ վարույթը պետք է ուղարկել ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատ՝ փարածքային ընդդատության հարցը որոշելու համար (...)⁴:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՄԴ3/0338/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշումը:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

⁴ Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 6, թերթեր 3-6:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրտեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «օրենքի հիման վրա սրտեղծված դատարան» հասկացությունը մեկնաբանելիս նշել է. «Այն երկրներում, որտեղ օրենքը կողիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապարասիան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»⁵:

Մինևույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «Ներպետական դատական արյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»⁶:

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ⁷:

11. ՀՀ քրեական դատավորության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Արդարադատությունը, դատախազական հսկողությունը, նախաքննությունը, հետաքննությունը և հանրային այլ գործունեությունն իրականացվում են բացառապես իրավունքի շահից ելնելով օրենքի հիման վրա սրտեղծված իրավասու մարմինների կողմից»:

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

որոշման հետևությունների հետ չհամաձայնվելու հիմքեր առկա չեն, այնուամենայնիվ հարկ է համարում արձանագրել հետևյալը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով հստակ սահմանված են վարույթի տարածքային ընդդատության կանոնները: Մինևույն ժամանակ, արդարադատության շահից ելնելով, օրենսդիրը նախատեսել է որոշակի պայմանների առկայության դեպքում վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու հնարավորություն՝ գործը ողջամիտ ժամկետում՝ ավելի արագ և արդյունավետ քննելու նպատակով: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված է, որ վարույթի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել, երբ վարույթի մասնավոր մասնակիցների ու վկաների մեծամասնությունը բնակվում է այլ դատարանի դատական տարածքում, ինչպես նաև **առկա է վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ բոլոր մեղադրյալների համաձայնությունը**: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վերջին պայմանի բացակայությունն ինքնին բացառում է դատարանի կողմից վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու հնարավորությունը՝ անկախ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների բնակության վայրից: Վերոգրյալից հետևում է, որ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից գործի քննության իրավունքը՝ յուրաքանչյուր մեղադրյալի հիմնարար, անօտարելի և անբաժանելի իրավունքն է և հիշյալ սկզբունքից շեղումը հնարավոր է միայն վերջինիս հստակ կամահայտնության դեպքում:

Այս համատեքստում քննարկելով ենթադրյալ հանցանք կատարած և մահացած անձի օրինական ներկայացուցչի համաձայնությամբ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու հնարավորությունը և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածով ամրագրված այն պահանջը, որ մեղադրյալի օրինական ներկայացուցիչն ունի մեղադրյալի բոլոր իրավունքները, բացառությամբ այն իրավունքների, որոնք անբաժանելի են մեղադրյալի անձից, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ վարույթի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել միայն մեղադրյալի հստակ կամահայտնության դեպքում:

Հետևաբար, նկատի ունենալով, որ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելուն համաձայնություն տալը՝ որպես կամահայտնության դրսևորում, մեղադրյալի անձից անբաժանելի իրավունք է, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցանք կատարած և մահացած անձի օրինական ներկայացուցչի համաձայնությամբ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելն իրավաչափ չէ:

16. Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելիս, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի և 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես՝ վերոնշյալ հիմքով քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու պարտադիր պայմանը, մեղադրյալների համաձայնությունը, սույն վարույթով առկա չէ:

17. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ3/0338/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր չէ:

18. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է ուղարկել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ՍԴՅ/0338/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել
Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ